



ԹՈՐԴՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՎՈՍ ԳՈՒՇԱԿՅԱՆ

(ԵՐՀԱՆԿԱՑԲԽԱՏԱԿ պատրիարք ԵՐԵՎԱՆԻ ԲԱԼՈԾ)

«ՄԱՅՐ ՈՐԴԻՌՎԱՎ ԲԵՅՆԻՐԵԱԼ»

Ա շ որ ալ լինի Ս. Կույսին անձին վերաբերմամբ մեր քրիստոնեական ըմբռուումին տևսակետը, ավետարանական պատմության կամ դավանաբանական հասկացողությանց ո՞ր անկյունն ալ դիտե զայն Եկեղեցին, բարուական արժանիքին, ավելի ճիշտ՝ մայրական առաքինությանց տիպար կոչ մտածումն է ամեննեն ավելի, որ կլուապսակե Անոր գելքը մեր կրոնական գիտակցության առջև։— Հիսուս Մանուկը գրկած Մարիամի պատկերը, զոր մեր նայվածքին հանդեպ կպահենք շարունակ՝ մեր հավատքին ուրության խորանին ներգե, խորհրդանկարն է այդ իմացումին մանավանդ։ Ու այդ խորհուրդը, այդ տարադին մեջ ամփոփված, հանապազորդ դաս մըն է, զոր մեր կրոնքը կավանդե մեզ՝ կյանքի ամեննեն նվիրական և գործնական մեկ մարդին մեջ։

Թողոր մյուտ ստորոտպական հորչորջումները, — Աստվածածին, Աստվածածմայր, Ս. Կույս, Ամենօրհնյալ Կույս, — զանց ընելով տակավին «Մարմատեսի Քերովբե», «Երկնավոր արքայուհին» նման խորհրդապաշտորեն բանաստեղծական այն մակդիրները, զորս նարեկացիի հոգլով տեսանողներ ընծայած են Անոր, ամենքն ալ, թեև ճշմարիս և իրական վերագրումներ անշուշտ, բայց իրենց խորքին մեջ գեղազարդումը և ընդաշնորեն պանծացումն են միայն պարզ և սրտագին այն զգացումին, զոր ժողովուրդին բարեպաշտությունը խորցուցած է մարիամ-Մայր ինքնատիպ և անուշ բացարության մեջ։

Մարիամ, մեր Փրկչին ծնողը, գերազանց Մայրը, տիպար Մայրն է ամեննեն ավելի։ Խաչին բարձունքն սիրո աշակերտին ավանդված պատպամը ամբողջ մարդկության ուղերձված մատնանշում մըն է, որ կցուցնե և կհասկցնե մանավանդ, թե ի՞նչպիսի անձ պետք է լինի մայր մը։ Եվ արդարեւ, Աստուծու և Մարդու Որդիին սրտեն՝ իր կյանքի

գերագույն մեկ բոպեին մեջ փրթած այդ բառը, «Ահա՝ մայր քո», անսուտ խոսք մընէ, որ կպարունակե անհակառակելի ճշմարտություն մը։ Մարիամու դեմքը կենդանի այն գաղափարն է, որուն մեջ ապրեցավ մայրական առաքինությանց իդեալը։

Ճշմարիտ մայրը ան է, որ կհավատա, թե երկունքին պտուղը Աստուծմն իրեն հանձնը-ված ավանդ մըն է, առաջին վայրեցանեն իսկ արդեն Աստուծու շունչովը և Անոր իմաստության և բարության շնորհներովը օծված և որ կմտածե, հետևաբար, թե իր պարտականությունն է զանալ հսկել և հոգածու լինել, որ ընդմիշտ անշինջ մնան այդ շնորհները, որպեսզի անոնց ներքի ծածկված բարի ընդունակությանց զարգացումովիք՝ իր ծոցածին զավակը կարենա իրեն համար նախասահմանված կոշումին ճամբեն ընթանալ գեպի աստվածային կատարելության ճակատագիրը, որ նպատակն է ամեն մարդկային կյանքի։

Խորհրդին ուրիշն, թե աստվածային կղելություն մըն է, որ տեղի կոնհենա ամենն անգամ, որ մարդկային ծնունդ մը կզվարթացնե տան մը մթնոլուրաք, թե մարդում կամքեն՝ այսինքն ապատութենեն կախում ունի արդյունագործել կամ եղծել այդ եղելության աստվածայնությունը, թե ամեն մարդկային էակ, իր ընական և հոգեկան հարմարություններուն համեմատ, որոնք իր ծնունդին մեջ նույնիսկ կիրագործվին, սահմանված է դերի մը, որ իր կոշումն է, և թե բոլոր զինքը շրջապատողներուն, այսինքն ամեննեն առաջ և ավելի ծնողքին՝ և մանավանդ մոր պաշտոնն ու պարտականությունն է թուլլ շտալ, որ խաթարվի այդ կոշումը, իբր սրբություն, իբր ուղղություն, և իբր ամեն ինչ, որ մարդուն մեջ կկացուցանն հոգին՝ պատկերն Աստուծու և այս պետք է լինի մայրական խրզճացտանքին ամեննեն անառիկ և անհրաժեշտ պարտականությունը։

Թե այսպիսի Մայր մը եղավ իրապես Մարդարան, Ավետարանն է, որ կցուցնե մեզի: Անգիտակ առաջին վայրկյաննեն երկնից կամքը կարդալ իր աստվածային Զավկին ծնընդյան բացառիկ պարագաներուն մեջ, երկյուղած մտասնեռումով հետևելով այն բոլոր իրադարձություններուն, որոնք կատարվեցն Անոր շուրջը, խանձարուրքին սկսյալ մինչև դուռը Տաճարին, ուրկե ներս մտեր էր Մանուկը՝ իրեւ իր հայրենի տան մեջ, պահեց այդ բույրը սքանչելիքներուն խորհուրդը իր հոգիով խորը, ու մինչ Հիսուս Քամքեր և կորուանար իմաստությամբ և հասկանի իր Մորը րարի սրտին, սուրբ կենցաղին և մարտը նկարագին ազդեցությունն ալ կործակցեր Հոգիով, իր մեջ զարդացնելու համար Աստուծու և մարդոց շնորհներով համարապես զարդարված Գերագույն էակի մը կատարելությունը: Հետո, երբ հաջորդ տարիներու ընթացքին՝ ավելի լուսավորվեցավ իր մեջ այդ խորհուրդը, երբ հետզհետև ավելի պատեհնովյուններ ունեցավ ըմբռնելու իր զավկին աստվածային և փրկարար կոչումը, առանց ընավ տարվելու առունին զացումներ և մարդկային նկատումներ, իր հոգեկի համակերպությամբը բաշալերած եղավ Անոր ընթացքն ու գործունեությունը, մինչև Անոր կախաղանին ոտքը, ուր զոգուցնական արիությամբ դիմավորեց վիշտը, որ իրեւ ահավոր սուրբ մը կանցներ իր սրտեն:

Ահա՝ պատկերը, որուն մեջ Ավետարանը կցուցնե մեզի գերազանց Մոր գեմքը. ահավասիկ և դասը, զոր Եկեղեցին կավանդե, իր առնախմբած Հիշատակի հանդիսավորումներով շանալով հասկցնել մեզի, թե կնոջ մը համար ինչ բանի մեջ կկայանա մայրական պաշտոնը, և ինչ կերպով մոր մը հոգին կրնա բարձրագույն բերկրանքն զգալ իր զավկին կյանքին:

Կանցնի կինը. րայց կմնա մայրը. աշխարհի սուս հապույրները և կանացի ընդունայն գեղը օր մը միայն կտևեն. մինչ կրոնին ու բարոյականը անվախման դարբութ փառքով հիավերժացնեն առաքինի մոր մը Հիշատակը:

Սեր մայրենի..., «աստվածահրաշ բազմացումով շամբված հացն» է ան, ըստ բանաստեղծին. րայց բանիներ արդյոք կը ը-

ցած են ճաշակել անոր սուրբ սեղանեն: Ո՞րքան ցանցառ է թիվը երջանիկ մայրերուն, որոնք կրցած են իրենց սրտահատոր հրեշտակին առաջին ժամանի մեջ կարդալ մարմնու և հոգիո ազգումներն գերիվեր տնօրինության մը խորհուրդը, անմա՞ս պագայի մը կողմումը:

Հին կրոններուն բարոյական ոլորտին մեջ, և դեռ այսօր՝ արտաքո քրիստոնեության, կինն է, որ ապրած է միշտ մորը մեջ. մայրը, անոնց թույլատրած բմբոնումին համեմատ, կինն է միշտ, այսինքն այն էակը, որոն համար ծնիլը դիպված մըն է լոկ:

Ավետարանը միանգամ ընդմիշտ սրբադրեց այդ տեսությունը, մորը գաղափարին մեջ մատանանշելով աստվածային պաշտոնի մը բարձրությունը: Սաղմոսերգուին այն մտածումով, որուն մեջ կսաղմնավորվի քրիստոնեության բարոյականը, մայր է իսկապիս ոչ թե կամ ոչ միայն այն կինը, որ կծնի, այլ այն մանավանդ, որ հոգիով կրնա գործակցիլ Աստուծու, երկրի վրա հաստատելու և տարածելու համար երկնից Բագավորությունը: «Բնակեցուցանէ զամուկն ի տան ուրախամիտ՝ որպէս մայր որդուվկը բերկրեալը», ամո՞ւն ալ կրնա երանիկ ըլլալ՝ զավակներով բերկրած մոր մը նման, երբ իր մեջ կզաքա աստվածային առաքելության մը գերը: Ճշմարիտ մայրությունը հավատքով զորացած սերն ու գոլիքն է, այսինքն փրկարար գործունեության մը համար կնոյ մը սիրտը լիցնող հոժարությունը: Նա է իսկապես մայր, որ կծնի Աստուծու որդիներ, այսինքն կրնա իր զավակներուն հոգիովն մեջ մշակել առաքինության և գաղափարական կյանքի շնորհները. որ իր զավակին ծնունդին մեջ կողզունե ոչ թե իրեն համար ապագա նեցուկի մը ապահովությունը, այլ բարի և բարձր սկզբունքներու կանչված էակի մը մարմնացումը: Բազմածնումն բերմնավորությամբ լոկ խայտացող ձագախառն ընտանիքը չի կրնա ճանանալ այն երջանկությունը, որ կողեւորե ոչ միայն արյան, այլ նաև գաղափարի սերնդագործությամբ կազմված տան մը ներքին կյանքը. հոյ է, որ կին մը կրնա ինքունքը զգալ իրապես որպահ ոմայր որդուվկը բերկրեալը:

